**Ուրբաթ, 24 դեկտեմբերի, 2010թ.**

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 25 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի անասնաբուժության զարգացում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցների կահավորում» ծրագրերը.

«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ամանօրյա նվերներ հայ երեխաներին» և«Առողջություն երեխաներին» ծրագրերը.

Հայկական սեյսմոլոգիական և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի կողմից իրականացվող «Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Գավառ և Լճափ համայնքների երեխաների համար «Առաջին օգնություն» դասընթացի անցկացում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գավառի տարածաշրջանում», «Հայ Առաքելական եկեղեցու գեղարքունյաց թեմի Գավառ համայնքի կիրակնօրյա դպրոցի մասնակի վերանորոգում», «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանի հովանավորության», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում առողջապահական հաստատություններին», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Գյումրի քաղաքի և Հովունի ու Մարմաշեն գյուղերի կարիքավոր բնակչությանը», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Տավուշի տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում

Ալավերդու տարածաշրջանում», «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Ստեփանավանի տարածաշրջանում» և «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում» ծրագրերը:

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը, որի նպատակն է տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահովների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի ավտոմեքենայի նվիրաբերություն և բեռի ներմուծում» և «Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում» ծրագրերը.

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագիրը.

«Սի. Օ. Էյ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագիրը.

«Երազ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին դեղամիջոցների, բժշկական սարքերի ու պարագաների և բժշկական ու հոգեբանական օգնության կամ հետազոտությունների նպատակով ֆինանսական միջոցների տրամադրում» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: